ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Է. Ս. Մարգարյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)



Անվանի գիտնական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Գոյատևման-զարգացման ռազմավարական կարևոր հիմնախնդիրները հետազոտող խմբի գիտական ղեկավար, նաև Գոյատևման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգային ասոցիացիայի (ԳԶՌՄԱՄԱ, Երևան) նախագահ Է. Ս. Մարգարյանը ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 24-ին Երևանում տոհմիկ մտավորականների ընտանիքում: 1953 թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ապա Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ արտասահմանյան փիլիսոփայության գծով:

Խոստումնալից է եղել Է. Մարգարյանի մուտքը գիտության բնագավառ. 1958 թ. Մոսկվայում պաշտպանեց «Հասարակական շրջապտույտի հայեցակարգի պատմական ակնարկ և քննական վերլուծություն» թեկնածուական ատենախոսությունը, իսկ 1967-ին՝ «Հասարակական կյանքի համակարգային հետազոտության մեթոդաբանական հիմնախնդիրները» դոկտորական ատենախոսությունը: Վերջինս ԽՍՀՄ ԲՈՀ-ը որակեց որպես հասարակագիտության բնագավառում այդ ժամանակների լավագույն հետազոտական աշխատանքներից մեկը:

Գիտնականի գրչին են պատկանում մեզ մոտ և արտասահմանում ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով հրատարակված հարյուրավոր հոդվածներ ու բազմաթիվ մենագրություններ. «Լոկալ քաղաքականությունների հայեցակարգի մասին» (1962), «Մշակույթի տեսության ակնարկներ» (1969), «Մարդկային գործունեության ու մշակույթի ծագումնաբանության մասին» (1973), «Մշակույթի տեսությունը և ժամանակակից գիտությունը» (1983), «Համաշխարհային ռազմավարական կառավարման ունակությունը. ՄԱԿ-ի համակարգի առաջիկա բարեփոխումը էվոլյուցիոն գոյատևման հրամայականների տեսությունից» (1998), «Մշակույթի մասին գիտությունները և դարաշրջանի հրամայականները» (2000), «21-րդ դարի հումանիզմը: Մարդկության ինքնապահպանման գաղափարախոսությունը» (2009) և այլն: Վերջին մենագրությունը հրատարակել է Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանը: Ներածականում ասվում է. «Ամենևին էլ չափազանցություն չի լինի ասել, որ… ներկայացված գիրքը կարելի է որակել որպես մարդկանց հասարակական կյանքի բնույթի, նրա վերարտադրողական ու էվոլյուցիոն ինքնակազմակերպման օրենքների մասին գիտելիքների յուրատեսակ հանրագիտարան… Այն կարելի է նաև համարել գոյատևման-զարգացման ռազմավարական հիմնախնդիրների ոլորտի ձեռնարկ»:

Է. Մարգարյանի անվան հետ է կապված մշակութաբանական ու ավանդութաբանական հայկական գիտական դպրոցի կազմավորումը, որն այսօր ունի բազմաթիվ հետևորդներ ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում, մասնավորապես Ռուսաստանում: Ավելին, այդ երկրի գիտական շրջանակներում Է. Մարգարյանը ճանաչվում է նաև որպես «ռուսական մշակութաբանության սկզբնավորող» (“Философские науки”, 2000, N 2, c. 17): Անցյալ դարի 60-ական թվականներից Է. Մարգարյանը մշակութաբանության հարցերի քննությունն սկսեց հենց այնտեղից, որտեղ կանգ էր առել ամերիկացի գիտնական Լ. Ուայտը: Նա առաջիններից էր Խորհրդային Միությունում, որ սկսեց հանգամանորեն ուսումնասիրել մշակույթի տեսության տրամաբանական-մեթոդաբանական խնդիրները և հանդես գալ այդ գիտության՝ իբրև հասարակագիտության յուրահատուկ բնագավառի առանձնացման գիտական անհրաժեշտության պահանջով:

Է. Մարգարյանի գիտական գործունեության հիմնական ուղղություններն ունեն նաև որոշակիորեն արտահայտված ազգային տեսանկյուններ, որոնք արտացոլվել են «Կենսապահովման մշակույթը և էթնոսը: Էթնո-մշակութաբանության հետազոտության փորձ (հայ գյուղական մշակույթի նյութերով)» (1983, կոլեկտիվ մենագրություն), «Ռեգիոնալ էկոլոգո-նոոսֆերային էքսպերիմենտի գաղափարի հիմնավորումը և համակարգային-օպտիմալացնող էկոլոգիական հետազոտությունների ծրագրի կոնցեպցիան (Հայկական ՍՍՀ-ի օրինակով)» (1986), «Հայ ժողովրդի մշակույթի գավառայնացմանը հակազդելու հնարավոր եղանակների մասին» (2002), «Հայերի ցեղասպանության գլոբալ տեսանկյունները» (2005) ուսումնասիրություններում: Է. Մարգարյանի կարծիքով, այսօր ահաբեկչությունը դարձել է մեր դարաշրջանի չարագույժ խորհրդանիշերից մեկը: Իսկ ահաբեկչական ակտիվության ամենասարսափելի տեսակը զանգվածային, պետականորեն կազմակերպված ցեղասպանությունն է: Նրա գնահատմամբ՝ Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, Հայկական հարցը վերաբերում են ոչ միայն հայերին, քանի որ կատարված չարագործությունը անպատիժ թողնելը, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան ցեղասպանածին գործունեության խրախուսում, որի ծայրահեղ բացասական ազդեցությունը մարդկային քաղաքականության զարգացման վրա բնորոշվում է որպես հայերի ցեղասպանության գլոբալ տեսանկյուն:

Ականավոր գիտնականի մշակած մի շարք գիտական հայեցակարգեր լայն ճանաչում են ստացել մասնագետների շրջանում և դարձել զանազան գիտական, նաև միջազգային խորհրդակցությունների հիմք: Դրանցից վերջինը՝ «Նոր մարտահրավերներ ու գլոբալ սպառնալիքներ միջազգային անվտանգությանը 21-րդ դ. սկզբին: Անցումը քաղաքակրթության ուղղորդվող զարգացմանը՝ որպես մարդկության ինքնապահպանության պայման» (Երևան, 2004 նոյեմբեր), կազմակերպել էր Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը: Է. Մարգարյանի կարծիքով՝ խիստ անհրաժեշտ է մարդկության, համաշխարհային քաղաքակրթության անցումը զարգացման տարերային տիպից նրա գիտակցաբար կարգավորվող, մարդասիրաբար ուղղորդվող տիպին: Քաղաքակրթության բոլոր օղակները (ներառյալ՝ նյութական տեխնոլոգիաները), մարդկային գործունեութ-

յան բոլոր ոլորտները պետք է ենթարկվեն մարդկության ինքնապահպանման նպատակին: Նրա համոզմամբ՝ մարդիկ այդ նպատակին չեն կարող հասնել առանց արդի գիտության ու կրթության զարգացման գերակայությունների արմատական փոփոխության, հասարակական գիտությունների կարգավիճակի արմատական վերանայման. չէ՞ որ նոր ժամանակներից առ այսօր դրանք հայտնի հեքիաթի հերոսի՝ Մոխրոտիկի կարգավիճակում են, վերջապես, առանց գիտությունների հիմնական խմբերի՝ բնագիտության, հասարակական, տեխնիկական գիտությունների սերտ փոխազդեցության: Տարիների ընթացքում Է. Մարգարյանին հաջողվել է մշակել այդ նպատակի համար անհրաժեշտ գիտելիքներ: Նա ստեղծել է լայնորեն ընդհանրացնող շուրջ տասնհինգ գիտակարգեր ու հասարակության հիմնախնդիրների համակարգային հետազոտության բազմաթիվ հայեցակարգեր:

Պրոֆեսոր Է. Մարգարյանը ավելի քան կես դար աշխատում է Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ լինելով նրա նվիրյալներից ու գիտության քրմերից մեկը: Համարյա նույնքան ժամանակ էլ նա Հայաստանի յուրատեսակ գիտնական-դեսպաններից է փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության բնագավառում: Իհարկե, ամենից առաջ Ռուսաստանում, ապա և աշխարհի մյուս երկրներում՝ Հայաստանը ներկայացնելով արտասահմանյան գիտական մամուլում, զանազան, նախկին միութենական ու միջազգային գիտական հանդիպումներում ու համաժողովներում:

Է. Մարգարյանը օտարալեզու գիտական գրականության մեջ ամենաշատ մեջբերված հայ հեղինակներից է: Նրա մասին կարելի է տեղեկանալ նաև հետևյալ հրապարակումներից՝ Хоруженко К. М. Культурология. Энциклопедический словарь.- Ростов-на-Дону, 1977, с. 289-290; Алексеев П. В. Философы России XIX-XX столетий. Биографии. Идеи. Труды. М., 2002, с. 606 և այլ տեղեկատու աղբյուրներից:

Է. Մարգարյանի ամենավերջին հրապարակումը «Ծրագրային առաջարկներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարեփոխման նպատակով: Թեզիսներ 21-րդ դարի գիտակրթական մշակույթի մասին» (2009) գրքույկն է: Խիստ խորհրդանշական է նաև այն փաստը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած փիլիսոփայության օրը (2009 թ. նոյեմբերի 20) Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում նվիրված էր Է. Մարգարյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին:

Բազում հիմնախնդիրների մշակման հարցում այնքան մեծ է գիտնականի ներդրումը, որ Ամերիկյան կենսագրական ինստիտուտը (ABI) Է. Ս. Մարգարյանին ներկայացրեց «Տարվա մարդը» (1998) տիտղոսի կոչման, նրան ներառելով «500 անվանի առաջնորդների» ցուցակում, իսկ անցյալ դարի 90-ական թթ. վերջին՝ «XX հարյուրամյակի ականավոր մարդը» տիտղոսի կոչման:

ՎԱՐՏԱՆՈՎԱ Ժ.Ա.
Փիլիսոփայական գիտ. թեկնածու
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ս. Գ.
Փիլիսոփայական գիտ. թեկնածու